ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/34

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.04.2019թ. թիվ 26/26-1/6455-2019 գրությամբ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.02.2019թ. թիվ ՊՆ/510ԱՂ-202 գրության պատճենի հիման վրա, 17.04.2019թ. թիվ 26/26-1/6455-2019 գրությամբ Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում նախաձեռնել է «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հետայսու նաև՝ Ցուցակ) ներառելու ընթացակարգ:

2. «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/34 ընթացակարգի շրջանակներում 30.04.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 27.02.2019թ. թիվ ՊՆ/510ԱՂ-202 գրությամբ հայտնել է, որ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /քաղաքացիական գործ թիվ (ԵԱՔԴ/2007/02/17) ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կառավարության՝ նախարարության կարիքների համար ապրանքի գնման թիվ ՇՀԱՊՁԲ-7/17-1 պայմանագրի միակողմանի լուծմանն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք լիազոր մարմնին «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը դադարեցնելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Դատարանը թիվ ԵԱՔԴ/2007/02/17 քաղաքացիական գործով 06.07.2018թ. կայացրած վճռով հայցը բավարարվել է:

Վճռի դեմ Նախարարության կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԱՔԴ/2007/02/17 քաղաքացիական գործով 20.12.2018թ. կայացված որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է, Վճիռը բեկանվել և փոփոխվել, հայցը մերժվել է:

Պատվիրատուն հայտնել է, որ վերաքննիչ դատարանի որոշումը մտել է օրինական ուժի մեջ, իսկ դրանով նախատեսվել է, որ Որոշումը օրինական ուժի մեջ մտնելու

պահից վերացվում է Դատարանի 20.05.2017թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովումը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն խնդրել է լիազոր մարմնին հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը վերսկսելու «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/34 ընթացակարգի շրջանակներում 30.04.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԳՆ-2019/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության և «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.04.2014թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/17-1» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևերով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել՝ սույն պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված չօգտագործված «տնտեսական, սանիհիգենիկ և լվացքի միջոցներ» (հետայսու նաև՝ Ապրանք), իսկ Գնորդը (տվյալ դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը) պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

3. Պայմանագրի 3-րդ կետի 3.1.1 ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

4. Պայմանագրի 3-րդ կետի 3.1.2 ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմաններին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ:

5. Պայմանագրի թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագրով նախատեսվել է հետևյալ գնման առարկաները՝ 1-ին կետով՝ ձեռքի օճառ, 2-րդ կետով՝ տնտեսական օճառ, 3-րդ կետով՝ կոշիկի քսուկ՝ սև գույնի, 4-րդ կետով՝ օճառի աման, 5-րդ կետով սափրվելու սարք և 6-րդ կետով՝ սանր:

6. Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացուցով ապրանքների մատակարարումը նախատեսվել է 2014թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին:

7. Պայամանագրի 3.4 կետի 3.4.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

8. Պայմանագրի 3-րդ կետի 3.1.7 ենթակետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը: ***Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

9. ՀՀ պաշտպանության նախարարությունը «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 05.09.2014թ. թիվ ԴՎԱ/2419 գրությամբ հայտնել է, որ համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.04.2014թ. կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-7/17-1 ծածկագրով գնման պայմանագրի՝ Ընկերությունը 2014թ.

մայիս, հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին պետք է մատակարարեր ածելի մեկանգամյա օգտագործման ապրանքատեսակը:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության 28.08.2014թ. ելք դ/թ 946 և ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության 15.08..2014թ. N 514/19816 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ Պայմանագրի 3.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն, 2014թ. Սեպտեմբերի 5-ին միակողմանի մասնակի լուծում է 23.04.2014թ. կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-7/17-1 ծածկագրով գնման պայմանագիրը՝ 335 980 հատ ածելի մեկանգամյա օգտագործման ապրանքատեսակի մասով:

10. «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /քաղաքացիական գործ թիվ (ԵԱՔԴ/2007/02/17) ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կառավարության՝ նախարարության կարիքների համար ապրանքի գնման թիվ ՇՀԱՊՁԲ-7/17-1 պայմանագրի միակողմանի լուծմանն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք լիազոր մարմնին «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը դադարեցնելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

11. Դատարանի թիվ ԵԱՔԴ/2007/02/17 քաղաքացիական գործով 06.07.2018թ. կայացրած վճռով հայցը բավարարվել է:

12. Վճռի դեմ ՀՀ պաշտպանության ախարարության կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԱՔԴ/2007/02/17 քաղաքացիական գործով 20.12.2018թ. կայացված որոշմամբ որոշվել է վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը մերժել:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.04.2019թ. թիվ 26/26-1/6455-

2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.02.2019թ. թիվ ՊՆ/510ԱՂ-202 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ*** (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) ***կատարելը»:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.04.2014թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/17-1» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ն) պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևերով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել՝ սույն պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված չօգտագործված «տնտեսական, սանիհիգենիկ և լվացքի միջոցներ» (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագրով նախատեսվել է հետևյալ գնման առարկաները՝ 1-ին կետով՝ ձեռքի օճառ, 2-րդ կետով՝ տնտեսական օճառ, 3-րդ կետով՝ կոշիկի քսուկ (սև գույնի), 4-րդ կետով՝ օճառի աման, 5-րդ կետով սափրվելու սարք և 6-րդ կետով՝ սանր:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարումը նախատեսվել է 2014թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 05.09.2014թ. թիվ ԴՎԱ/2419 գրությամբ հայտնել է, որ համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.04.2014թ. կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-7/17-1 ծածկագրով գնման պայմանագրի՝ Ընկերությունը 2014թ. մայիս, հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին պետք է մատակարարեր ածելի մեկանգամյա օգտագործման ապրանքատեսակը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության 28.08.2014թ. ելք դ/թ 946 և ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության 15.08..2014թ. N 514/19816 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ Պայմանագրի 3.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն, 2014թ. սեպտեմբերի 5-ին միակողմանի մասնակի լուծում է 23.04.2014թ. կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-7/17-1 ծածկագրով գնման պայմանագիրը՝ 335 980 հատ ածելի մեկանգամյա օգտագործման ապրանքատեսակի մասով:

Պայմանագրի 3-րդ կետի 3.1.7 ենթակետը սահմանում է, որ ***Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը*** (լրիվ կամ ***մասնակի)***, եթե Վաճառողն

էականորեն խախտել է Պայմանագիրը: ***Կապարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) բազմիցս խախտվել են Ապրաքնի մատակարարման ժամկետները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԱՔԴ/2007/02/17 քաղաքացիական գործով 20.12.2018թ. կայացված որոշումը և գործով առկա նյութերը, գտնում եմ, որ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ն թույլ է տվել ՀՀ պաշտպանության նախարարության և «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.04.2014թ. կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-7/17-1» ծածկագրով ապրանքի գնման պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, քանի որ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրի 5-րդ կետով նախատեսված ապրանքը՝ սափրվելու սարք/ ածելի մեկանգամյա օգտագործման/ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում չի մատակարարվել:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը***:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, ուստի գտնում եմ, որ թույլ տրված խախտումը դեռևս բավարար հիմք չէ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված կարգով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.04.2019թ. թիվ 26/26-1/6455-2019 գրությամբ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ